ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am

N 02/4208
22 06 **2020 թ.**

«ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» ՏՀԿ
ԼՐԱԳՐՈՂ ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարտիրոսյան

Ի պատասխան ՀՀ Գեղարքունիքի մարզպետին հասցեագրված Ձեր 2020 թվականի հունիսի 16-ի թիվ 237/20 առցանց գրությանը՝ հայտնում եմ, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատավարձը հաշվարկվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելված 1-ով:

Միաժամանակ հայտնում եմ, որ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի՝ մարզպետը օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր, որը հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում:

Հետևաբար ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2019 թվականի ընթացքում ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պաշտոնական կայքէջից:

Հարգանքներով՝

22.06.2020

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ